



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

281.69
9 - 76

04 NOV 2009

ԶՈՐՈՅԱՐԴ ԴԱՐՈՒԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

27 DEC 2009

4.

ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ՅԱԶՈՐԴՆԵՐ

(Արտաստպած «Լումայ» հանդիսից)

Թիֆլիս
Յանաբան Տ. Մ. Ռուբինեանցի
1903

281.69
Q-76

17.07.2013

9094

31.69

-76

ՆԵՐՍԻ ՄԵԺԻ ՅԱՀՈՐԴԻՆԵՐ

Տ. ՇԱՀԱԿ ՄԱՆՈՒՋԿԵՐՏԱՑԻ

1. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵԽ ԱՆՈՒՆԸ

Մեծին Ներսէսի մահուան և թաղման վրայ ատեն չահացաւ, թաղաւոր և եպիսկոպոսներ համաձայնութեամբ հալրապետական աթոռին վրայ հանեցին Շահակը Սա ոչ երկար ատեն պաշտօնավարեց և ոչ լիշտակաց արժանի գործ մը կատարեց, բայց շատ խնդիրներ կան իւր վրայ մտադրութիւն հրաւիրող և նշանաւոր դիսլուածներ ալ չեն ողակներ իւր ժամանակին մէջ:

Առաջին խնդիր բուն իսկ անունն է՝ Խորենացի (Խոր. 94) և անոր հետեւզութեամբ պատմագրաց և ցուցակագրաց ստուար մեծամասնութիւնը կը գրեն Շահակ, որ է նոյն ինքն խահակ կամ Սահակ անունը ասորական հնչմամբ, որուն կը հետեւ Տարոն զաւառն ալ հարաւախն զաւառաց հետ: Կան և պարզապէս Սահակ գրողներ (Սմբ. 273), Բուզանդ Յուսիկ անուն կուտայ (Բուզ. 232), և այս պատճառով ոմանք երկու անուններն ալ պահելով Յուսիկ մը և Շահակ մը միանդամալո անցուցին իրենց ցուցակին մէջ:

Մեր կարծեօք Խորենացւոր Շահակը և Յուզանդայ Յուսիկը տարբեր անձեր չեն, այլ մի և նոյն անուան գրչական տարբերութիւնք են, կամ թէ երկու անունով անձ մըն է, ինչպէս Փառէն - Ներսէս հալրապետին համար ըստինք Երկու պատմագրերը ալ Ներսէսի և Զաւէնի մէջ միայն մէկ կաթողիկոս կը ճանչնան, և օրէն չէ շատ ցնել Երկուքին լիշտական անձն ալ նոյն Մանազկերտ զաւառէն է և նոյն Աղբիանոսի ցեղէն. Երկուքին պաշտօնական նկարագրը նոյն, և կաթողիկոսական ընտրութեան և ձեռնադրութեան կերպերը նոյն, կաթողիկոսութեան տեսղութիւնն ալ նոյն միջոցով փակուած, Մի և նոյն ժամանակի մէջ երկու ըստ ամենայնի համանման անձեր զտնել, մի և նոյն անձը զտնել ըստ է.

Дозволено цензурою, Тифлисъ, 30-го Мая 1902 г.



64025-67

Գրչութեան տարբերութեան լուծումը կուտակ մեղ Ներսէսի և Տարսովի ժամանակ պատրաստուած արեելեան եպիսկոպոսաց ողերձը, որ ուն վրայ խօսուեցաւ Ներսէսի կաթողիկոսութեան վերջերը: Յունարէնին մէջ Խոսակ դրուած անունը Լատիներէնի մէջ Խոսակ դրուած է, որոնց առաջնը տաւաղարձական վոփոխումներով կը լինի Յուսակ և Յուսիկ, իսկ երկրորդը կը լինի Սահակ և Շահակ: Այդ զիտութիւնը իրաւոնք կուտակ մեղ հետեւյնելու թէ Յունարէն Քուղանդական պատմութենէ քաղաքած Քուղանդարանը Շահակի անունը Յուսիկի փոխեց, և թէ երկու անուններ երկու անձեր չեն և երկու կաթողիկոս ընդունելու չեն նպաստեր:

Տարբեր անուն մըն ալ կը զսնեմք Արքվանեցւոն ցուցակին մէջ, որ Շահակի տեղ Չոնակ դրուած է (Այր. 16), որ Ներսէսի ժամանակ հակաթոռ կամ ետեղակալ դրուած անձին անունն է: Արդէն Ներսէսի վրայ խօսած ատեննիս ալ ըսինք թէ Չոնակ ըստածը Շահակէ տարբեր անձ մը չկրնար լինել, հետևաբար Արքվանեցւոն ցուցակին ալ իւր տարբերութեան մէջ Նկատողութեան արժանի պարագաէ մը կը պարունակէ և կը հաստատէ թէ Շահակ—Չոնակ—Յուսիկ անձը, մի և նոյն հարապետն է, զոր մեք կը շարունակեմք աւելի սովորական անունով Շահակ կոչել:

Շահակի համար դրուած ծանօթութիւններն են, թէ Մանազկերտէ էր, թէ Մանազկերտի եպիսկոպոս էր, և թէ Աղքաբանոս եպիսկոպոսի ցեղէն էր, որ Մանազկերտացեաց ցեղ ալ կը կոչուի (Խոր. 94. Բուղ. 45. 232. Նշե. 27, Փարզ. 376): Աղքիանոս եպիսկոպոս ծանօթ է Աղքաթանգեղոսէ իբրև Լուսաւորչի նախընծալ և նախաթոռ 12 եպիսկոպոսներուն առաջնը, որ ապա «կողմանց Եփրատական վետոյն» եպիսկոպոս եղաւ (Աղքաթ. 626), այսինքն է Հարք և Մանազկերտ գաւառներուն «որ կալ ի կողմանս գետոյն Եփրատակ» (Բուղ. 10), որ ուրիշ տեղ Քզնունեաց եպիսկոպոս ալ կը կոչուի (Արձր. 6): Աղքիանոս եպիսկոպոս միանգաման եղաւ ալիքացաւ արքունական դրան բանակին» (Աղքաթ. 627), և ահա թէ ինչու Լուսաւորչաւ ցեղէն աթոռակալին պակաս կամ բացակալ լինելուն, Աղքիանոսի զաւակէն կառնուի չաջորդը կամ ողեղակալը: Իսկ Մանազկերտ Աղքիանոսի կալուած տրուեցաւ Ժորովը Մանաւաղեանց կոտորածէն ետքը (Բուղ. 10):

Շահակի և Աղքիանոսի պղպակցական լարարերութիւնը

տեղ մը Կղբակը ըսուած է (Սամ. 273), սակայն առաջին պատմողներ չաջորդէ և ի ժառանգութենէ» (Խոր. 94), կամ «ի զաւակէ» (Բուղ. 232), միայն կըսեն և ոչ աւելի. և 303-ին ատենները նախաթոռ եպիսկոպոս լինելու տարիքն ունեցող Աղքիանոսը, 373 ին կաթողիկոս ընտրուող Շահակին եղբարձր չկընար ըլլալ, և ոչ իսկ որդի, զի 303-է շատ կանուխ ծնած պէտք է ենթաղրել, մանաւանդ որ եթէ եղբար կամ որդի լինէր, ինչ ըլլալը ժամանակին չալուի կը դրաէր: Ուստի գոնէ Աղքիանոսի թոռ կամ կրտսերեղբօր որդի պէտք է ըսել, և 352-ին տեղապահութիւն ըրած լինելն ալ նկատի տունելով, պէտք է 373-ին 70 տարեկանէ վեր ենթաղրել Շահակ կաթողիկոսը:

2. ԶԵՌՆԱԴԻՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Շահակ ըստ միաձան վկալութեան պատմչաց ձեռնադրութեան համար կեսարիա չգնաց (Խոր. 94. Բուղ. 232, Նշե. 27), և պատճառն ալ այն է որ արդէն եպիսկոպոս էր (Բուղ. 232), և նորէն ձեռնադրութիւն չէր ըլլար: Յուսիկի, Փառէնի և Ներսէսի կեսարիա երթալնին պատմած ատեննիս եպիսկոպոս չլինելնին ալ միանդաման ւեհցուցինք. բայց Շահակի չերթալը ապագալին մէջ հասաւառն սովորութիւն եղաւ, և անկէ առիթ առնելով դէմդէմի կեղծ պատմութիւններ շինուեցան:

Բուզանդ կը գրէ թէ երբ կեսարիու արքեալիսկոպոսը Շահակի կաթողիկոսանալը լսեց, բարկացաւ, և եպիսկոպոսաց նահանգական ժողով զումարեց, Հալոց կաթողիկոսութիւնը չնշեց, և լոկ հաւ եպիսկոպոսներու վրայ նախաթոռութեան երաւունքը թողուց, պարզապէս արքունեաց մէջ հաց օր հանեւ ու պաշտօնով, որ լայտնի չէ թէ ճաշ օրհնել թէ ոչ պատարագ մատուցանել պիտի իմացուի, և միանդաման հրաման հանեց որ ախունեած բոլոր Հակասանի եպիսկոպոսներ կեսարիա երթան և ախտեղ ձեռնադրութիւն:

Այս ամեն տարօրինակ կարգադրութիւնք պէտք է 373-ին եղած լինին, մինչ 370էն 379 կեսարիու արքեպիսկոպոսը Ա. Բարսեղն է, որուն ամեն գործերը ամենայն մանրամասնութեամբ իւր գրքերէն և նամակներէն և իւր ընկերակցաց և աշակերտաց դրուածներէն կը քաղուին. իսկ Յուղանդի պատ-

մածներուն հետքն անդամ չտեսնուիր Երբ Թիանիու և Նիկոպոլսու եպիսկոպոսներուն հետ վարած խնդիրները ամեն պարզաներով գրուած են, զարմանալի պէտք է լինէր որ Հայոց կաթողիկոսին հետ ունեցած աւելի մեծ և աւելի կարեոր խընդիրը բացարձակապէս մտադրութենէ վրիպէր:

Աւելին ալ կատ. Բարսեղ Հայոց և հայ եպիսկոպոսաց խնդիրներ ալ կը լիշէ և Հայաստան ացելեն ալ կը պատմէ. սական Բարսեղի ըրածը և զրածը Նիկոպոլիս և Սադաղա և Կողոնիա և Մելիտինէ և Կոմանա քաղաքներու շրջանակներու մէջ կամիոփուին, որոնք Փոքր Հայոց քաղաքներ են և Պոնտոսի եքսարքութեան Առաջին Հայք և Երկրորդ Հայք կոչուած նահանգները կը կազմեն, և Խեծ Հայք դուրս կը մնան, որ է բուն Հայոց կաթողիկոսին վիճակը կամ իրաւասութեան սահմանը. Պէտք է ես աւելացնել որ Բուղանդի ցուցած պարագաներէն և ոչ մէկը երբեք ճշմարտուած չէ. ոչ կաթողիկոսը լոկ հացերէց մը զարձած է, ոչ Հայոց մէջ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը դադրած է, ոչ հայ եպիսկոպոսացուներ Կեսարիաէ ձեռնադրութիւն առած են, ալլ միայն Շահակէ սկալով կաթողիկոսներն ալ Կեսարիաէ ձեռնադրուած չեն. և 353+ էն ետքը Կեսարիու հետ պատահաբար սկսած ձեռնադրութեան կապն ալ դադրած է:

Ալդ ձեռնադրութեան սկարահական կապն ալ մենք կը նդունիմք միայն ի պատիւ մեր ազգային գիրքերուն. առա թէ ոչ եթէ արտաքին զատմադրաց և մատենազրաց դիմեմք և եթէ ինչպէս աժմ ոմանք կուղեն՝ միայն արտաքին պատմիչներուն ըստածը իրը գերազոն հեղինակութիւն և պատմական ստուգութիւն ընդունեմք, իրաւունք կունենամք նոյն իսկ Գրիգորի և Ներսէսի Կեսարիա ձեռնադրուած լինելն ալ ջնջել. քանի որ արտաքինք ասանկ բան մը չեն պատմեր, Հետեաբար եթէ ազգային պատմագլուխուով պիտի խօսիմք, պէտք է ընդունիմք թէ 303է 373 տարիներու միջոցին ալ ոչ երբէք Կեսարիու արքեպիսկոպոսներ Հայոց եկեղեցւոց գործերուն միջամտեցին, ոչ երբէք Հայեր ինդրով համար Կեսարիա դիմեցին, և ոչ երբէք Հայոց կաթողիկոսութիւնը ինքունքը Պոնտոսի եքսարքութեան ենթարկեալ ճանչցաւ և ոչ ալ Կեսարիու արքեպիսկոպոսներ Մեծ Հայքը իրենց իրաւասութեան մէկ նահանգը կարծեցին.

Չետ ն դարերաւ պատմութիւնք Մօրիկներու և Հերակլ ներու ժամանակ աշնակէս կը ցոցնեն, որ երբ կալսեք Հայ-

տատանէ գաւառներ առին և լունական նոր կուսակալութիւններ կազմեցին, եկեղեցական կարգադրութիւններ ալ ըրին և Հայաստանի մէջ լունական մետրապոլտութիւններ և եպիսկոպոսութիւններ ստեղծեցին. բայց աւ ոչ չորրորդ դարու վիճակը կը փոփոխէ, և ոչ Հայոց հայրապետութիւնը կը խախտէ. Ստորդ է ես որ քաղաքական տիրապետութեան հետ եկեղեցական տիրապետութեան ալ փոլծեր եղան ժամանակ ժամանակ, սակայն այս ալ հիմնական կացութիւն մը չեղաներ, ինչպէս լունական պատրիարքութեանց իրաւասութիւններ չկորսուեցան, երբ Խաչակրաց ժամանակ իրենց աթոռներուն գրայ լատին աթոռակալներ դրուեցան:

Բուզանդի կազմած պատմութիւնը դարմանելու հաւար, հակառակ պատմութիւն մը կը գտնեմք Ներսէսի վերջէն գըրուած վարքին մէջ, զոր առաջին պատմութիւնք չեն լիշեր. Նոր պատմութիւն նախ կըսէ թէ Կեսարիա երբեմն Հայոց քաղաք էր և թէ Կեսարիու առաջին եպիսկոպոսն Թէոփիլոս Թաղէսէ ձեռնադրուած էր, և ապա կը բաւելու թէ Ներսէսի բարիկարգութեանց ժամանակ մողովով հաստատուեցաւ որ այլ ես Կեսարիաէ ձեռնադրութիւն չառնուի, վասն զի Հայոց աթոռն ալ առաքելական է Թաղէսոսով և Բարգուզիմէսովի, վասն զի նոյն միջոցին Երուսաղէմ ալ և Կիպրոս ալ կոստանդնուպոլսով մողովով որոշմամբ պատրիարքութեան փոխուեցան և նոյն ժողովը Հայոց պատրիարքութիւնն ալ ընդունեցաւ (Եշի. 9—10, Յովհ. 62):

Արդ ապագիտի եղելութիւն մը իրը պատմական չեմք կարող ընդունիլ. դի Ներսէսի սկզբնական պատմադիբներէն և ոչ մին ալսպիսի բան մը չեն լիշեր. զի արտաքին պատմիչներու և ժողովներու մէջ ալ ալսպիսի բան չկայ, և վերջապէտ վասն զի ալսպիսի պատմութեան առիթ ալ չկայ. Հայոց աթոռը իւր հիմնարկութեամբ առաքելական էր իրօք ալ աղատ մնացած է որևէ ուրիշ աթոռուոյ մը գերիշանուութիւն վարել անոր աթոռներէն և ոչ մէկը կըցած է իշխանութիւն վարել անոր վրայ. Պարզ ձեռնադրութեան խնդիր մը կալ, արտաքոց ըստ ըստդրուին անձանօթ, իսկ ներքնոց համար ծանօթ միայն երկու պատահական պարագալից մէջ Գրիգորի և Ներսէսի վրայ, և ըստ Բուզանդի միայն նաև Յուստիրի և Փառէնի վրայ.

Անտեղի է նաև ումանց ըսելը թէ ալինց ի ժողովն Քաղ. Կիրոնի (Ա.արք. 31) Հայք Կեսարիաէ ձեռնադրութիւն ա-

ունու Քաղկեդոնի ժողովը տեղի ունեցաւ 451-ին, և վերջին Կեսարիա գացողը կըլլաւ Ներսէս 353-ին Քաղկեդոնի ժողովէն զար մը առաջ. իսկ այս զարուն մէջ որ Քաղկեդոնէն առաջ է, Շահակ և Զաւէն և Ասպուրակէս և նոյն ինքն Ս. Մահակ Պարթեւ Կեսարիա զացած չեն լայտնապէս:

Անտեղի է և այն մեկնութիւնը թէ երբ Հալոց աթոռը պատրիարքութիւն հոչակուեցաւ Ներսէսի ձեռօք, եկեղեցւու իննեակ զամակարգութիւնը լրացնելու համար Վրաց և Աղուանից աթոռներն ու արքեպիսկոպոսութիւն եղան. իսկ Սեբաստիա և Սելիստինէ և Նիփրկերտ և Ծոփք և Մուսուլ մետրապոլութիւն հոչակուեցան (Նշ. 11). Մեք գիտեմք թէ Վիրք և Աղուանք Լուսաւորչի ժամանակէն մնծ աթոռ չին, Մերաստիա և Սելիստինէ և Նիփրկերտ Մեծ Հայքի զուրս են, Ծոփք երբէք լատուկ մեծութիւն չունեցաւ, իսկ Մուսուլ Քաղդէացւոց աթոռ է և ոչ Հալոց:

Երկու կողմերուն դէմքնդէմ անհիմն պատմութիւնները թողով և լոկ պատմական եղուութիւնները ամփոփելով կըսեմք, թէ Հալոց ի սկզբանէ առաքելական և հազրապետական աթոռեղան, երբէք Կեսարիու կամ Պոնտոսի եքսարքութեան նահանգ չեղան, երբէք Կեսարիու աթոռը Մեծ Հալոց վրայ եկեղեցական իրաւասութիւն չգործածեց, իսկ ձեռնադրութիւն առնելու խնդիրը բոլորովին անծանօթ է արտաքին պատմիչներուն, իսկ ներքին պատմիչներէն միան Ներսէսի և Դրիգորի համար իբր ստորով կընանք ընդունել, իսկ Յուսիկի և Փառէնի երթալը ըուժ երկրաւական է, և թէ վերջապէս պատահական կերպով եղած բան մը պատահական կերպով ալ զարդեցաւ, առանց որ և է դիտողութեան կամ միջադէմի տեղի տալու:

Վերջէն ընտրուողներուն արդէն ձեռնադրուած եպիսկոպոս լինելը, հաւանականապոյն պատճառն է պատահական սովորութեան զարդելուն:

3. ՄԱՀ ԵՒ ԺԱՄ ԱՆԱԿԱԿԻՑ ԳԵՐԲԵՐ

Շահակի անցեալին վրայ մինչեւ հիմու անցողակի ըսածներէս զուրս բան չունինք լիշելու Մահաղկերտացեաց ցեղէն, Մահաղկերտի եպիսկոպոս, 352ին, տեղապահ Փառէնի, մահառանէ լիսով, 360ին զարձեալ տեղակալ Արշակի հրամանով Ներսէսի քաշուելու տարիներուն, 372ին արեւելեան եպիսկո-

պոսաց ուղերձին մէջ ստորագրող Յուսակ անունով, 373ին իրաց բնական բերմամբ կաթողիկոս եղաւ 70է վեր տարիքի մէջ. Լուսաւորչաւ ցեղէն Սահակ կալր միան հաղիւ 24 տարեկան երիտասարդ, ալ և նա բացակալ էր, միւս կողմէնէ փափաք ալ կալր հանդարտ ծերունի մը ունինալ իր կաթողիկոս:

Շահակին համար գրուածներն են. «ոչ հեռի ի գոյութենէ» (Խոր. 94), «Քրիստոնեայ, բաց երկուու և հաւան» (Բուղ. 233), «Այս գովելի առաքինութեամբ և բարեկարգութեամբ կրօնից» (Եջմ. 27. Յովհ. 67), «որք կրցուցնեն թէ բարի և հանդարտաբոլ ծերունի մըն էր, առանց կարողութեան, և թէրևնս առանց իսկ յօմարութեան քաղաքական գործոց միջամտելու և արքունիաց դէմ մաքառելու. Ըստ Յուզանդայ տարօրինակ անկարգութեանց կը ձեռնարկէ Պատ, զորս եթէ լուսութեամբ համատած լինէր Շահակ, մեղաղրանքէ աղատ պիտի չմնար, նաև իրեւ լոկ եկեղեցւու պաշտօնեալ նկատեալ:

Պատակ վերագրուած լանցանքներն են. որբանոցներ և հիւանդանոցներ կործանել, կուսաստաններ ցրուել և կոլուրը պղծել, աղքատաց վերակացուները հալածել և աղքատաց օգնողները պատմել, եկեղեցեաց պաղիները խափանել, ամուսնութեան հաստատութիւնը բառնալ և ազատ կնաթողութիւնը ներել, հեթանոսական վարպագ սուփերը նորոգել, եկեղեցական ողաշտօննեանները արքունեաց ստրկութեան առնուլ, եկեղեցատ կան կալուածներուն եօթնէն հինգը դրաւել, և վերջապէտ կուսք կամննել և համարձակ դիւապաշտութեան սկսիւ. Դիւրին է ընդունել թէ Պատ անհոգութեամբ թող տուաւ որ Ներսէսի պրած բարեկարգութիւնք խափանուին, ալ Յուզանդայ զրածները եկեղեցւու հալածչի և ուրացողի մը կերպարանը կը զգենուն. որ հաւանական չերնիր քրիստոնեալ իշխանի մը գրաւ. Միւս կողմանէ նոյն իսկ Պատի 23 տարեկան հասակը լուրջ գործողութեանց ընդունակ չէ. Վերջապէս Ներսէսի մահն մինչև Պատակ սպանութիւնը հաղիւ թէ տարի մը անցած է և Պատ պարտաւորուած է լուսնական ամբաստանութեան դէմ ինքոինքը պաշտպանել, որով անելի զգուշաւոր լինելու աւ հարկ զգացած պիտի ըլլաւ:

Յունաց և Պատակ հակառակութիւնը որչափ և պատմիչներէն վկայել սական առեղծուածական լինելէ չդադրիր, Յուն մօր զաւակ, Յունաստան ապրած, յունական կրթութիւն առած և Յունաց օգնութեամբ թագաւոր եղած անձի մը վրաւ

Տերավինք կըսէն թէ Պարսից հետ դաշնակցեցաւ և Յունաց
գէմ ելաւ (Բուզ. 238, Խոր. 94), իսկ լատին պատմիչը կըսէ
թէ Տերենտ կուսակալ Պոնտոսի հաւ նախարարներէն ոմանց
հետ համամտութեամբ Պապը շարունակ կամբաստանէր Վա-
ղէսի առջև, և Հայոց գժգու լինելը պատճառելով թագաւորը
փախել կառաջարկէր, որպէս զի Հայեր ուսահատելով Պարսից
կողմ չանցնին (Ամմ. 328), որ բուել է թէ Պարսից կողմ ան-
ցած չէին տակաւին, և բոլոր գործը կամբովուի Տերենտի անձ-
նական հակառակութեան վրայ:

Վաղէսի հրամանաւ Պապ կուգալ կիլիկիոյ Տարսոն քա-
ղաքը և նենդութեամբ կալանաւորուել կասկածելով, 300 ձիա-
ւորով կը փախչի, հետամուտ եղող գունդը ետ կը զարձնէ, Եփ-
քատը ի լոզ կանցնի, Դանիէլ և Բարդիմիր գնդապետներուն
գրաւոծ կիլմերէն հնարիմացութեամբ կաղատի, և իւր թա-
գաւորութեան երկիրը կը դառնար: Յունաց զօրավար Տրայանոս,
ստացած հրահանգին համեմատ, նախ Պապին վստահութիւնը
կը գրաւէ, և հացկերութի հրաւիրելով սեղանի վրայ սակրաւորաց
ձեռօք սպանել կուտապ (Ամմ. 329—230, Բուզ. 238—239):
Այս կը գործուի 374 տարուու ամառուան մէջ Բաղրեանդալ
Խոն գիւղը:

Խորենացւոյ պատմութեամբ Պապ Յունաց դէմ պատե-
րազմի կինէ և գերի կինափ Տերենտի ձեռք և կապանօք Թէ-
ստափ կը զրկաւի և Թէսողուի հրամանով կը գլխատուի ի Կաս-
տանդնուպոլիս (Խոր. 96): Սակայն Թէսողու 379ին կալարու-
թեան հասած լինելով, բարեբազզաբար Խորենացւոյ անարգա-
կան պատմութիւնը ի հիմանց կը մերժուի, Թէսողուի անուան ալ
լաւիտենական արատ մը չլինելու համար:

Խորենացիէն ունիմք թէ Պապ 7 տարի թագաւորած է,
որ է բանել թէ թագաւորութեան 7րդ տարին սպանուած է,
Ալբա, 368ին թագաւորած լինելով 374ին կը լինի վախճանք,
հազիւ 24 տարեկան եղած ատեն:

Անփարձ պատանի մը երեցաւ Պապ իւր բոլոր իշխանու-
թեան մէջ, փորձանքներու և վաւանդներու մէջ արի, ալլ ան-
հարող երկրին օգտակար և աղզին սիրելի լինելու, որ ւալո-
ւի է աղքատին պատմիչներան իւր վրայ նախատանօք խօսե-
լէն: Ամիշանաս իրեն ժիր և լուսալից երիտասարդ մը կը ներ-
կաւացնէ Պապը, իսկ անունը շաբանակ Պարա (Para) կը գրէ,
որուն առող լուծաւել արաւած չէ: Լալանաս պարզ սիսալման

կը վերագրէ և ինքն ուղղելով Պարա (Para) կը գրէ (Կալ.
Ա. 52):

Պապալ սպանութենէ ետև Յոյնք անմիջապէս՝ նոր թա-
գաւոր մը տուին Հայոց, զի Տերենտի առաջարկին ալ պարզա-
պէս Պապը փոխել էր ոչ թագաւորութիւնը ջնջել: Նշանակ-
ուած անձը եղաւ Վարազզատ, թոռն Արշակալ և եղբօրորդի
Պապալ (Բուզ. 248, Վարք. 118), որ ի ժամանակի փախստենէն
Շապհու, (Խոր. 96), —այլ յալանի չէ թէ որ փախելէն —ինքն
ալ կոստանդնուպոլիս գացած և կալսերական բանակին զին-
ուորած, և ողոմափական ըմբիշներու քաջութիւններով նշա-
նաւոր եղած էր: Տարիքը պղտիկ և հազիւ 25 կրնայ ենթա-
դրուիլ: Վարազդատին գալիքն առաջ նախարարք Մուշեղաչ
նախագահութեամբ խորհուրդ ըրած և Յունաց կողմը մնալու
որոշում տուած էին (Բուզ. 240), ուստի Վարազզատն ալ
դիւրութեամբ ընդունեցան:

Վարազզատ հազիւ 374ին վերջերը կրնայ դործի գլուխ
անցած ըլլալ: Ազդ միջոցին Շապուհ նորէն Հայաստանը զրա-
ւելու հետամուտ էր, և զանէ կիսելու և ջնջելու համար գես-
պանութիւն լզեց առ Վաղէս: Վաղէս մերժեց և նորէն փո-
խաղարձ դեսպաններ զրկուեցան, այլ համաձայնութիւն չգո-
յացաւ և 375ին մեծ պատերազմի պատրաստութիւնք սկսան
երկուստեք: Երբ Վաղէս կուզէր բոլոր զօրութիւնը ալս կողմ
թափել (Ամմ. 331), և Մուշեղի խորհրդով Հայաստանի մէջ
նոյն իսկ Հայերով Յունական քանակ կազմել (Բուզ. 241),
պարտաւորուեցաւ արևելքը լքանիլ և արևմուաքէն եկող վը-
տանգին դէմ վազել: և Վէկասոր զօրավարին լանձնեց Պար-
սից հետ բանակցիք և զիջողական պայմաններով խաղաղու-
թիւնը գնել, և ապազէս ոչ կրցաւ Պարսից լաջողութիւնը ար-
գելու և ոչ ալ իւր կորուստին վրէմքը լուծել (Ամմ. 331):

Վարազզատ անփորձ երիտասարդ և հասակակիցներով
շրջապատուած, տակաւին կրցաւ արդ շփոթութեանց մէջէն
պատուով ենել, ազդին սիրելի լինել և ընար եղածին չափ
խաղաղ կառավարութեան սկսիլ Յունաց համաթեամբ Պարսից
հովանաւորութեան տակ մտնելով (Բուզ. 241), Մուշեղ էր ալլ
գործերուն հոգին, ոչ նուազ քաջ զօրավար, քան ճարտար
աշխարհավար:

Միան կաթողիկոսի անուան չենք հանդիպիր ալսպիսի
նշանաւոր դիպաւածոց մէջ, ինչպէս են Պապալ սպանութիւնը,

Վարազդատապ թագաւորելը և երկրին քաղաքական կերպարանափոխութիւնը: Տարիք և բնաւորութիւն են Շահակայ արդարացումը: Եկեղեցական զործունէութիւն ալ չունիմք որ նորա անունը կրէ, և հայրապետութեան չորրորդ տարին կեանքըն ալ կը կնքէ (Խոր. 94): Ալդ տեսողութեան չափը զորնախին պատմիչը կուտաէ, փոփոխելու հարկ չեմ տեսներ. թէպէտ իւտիններէն ումանք մինչեւ 2 տարի իջեցուցած են և ուրիշներ մինչեւ 6 ամեցուցած, առանց ժամանակադրական ստիպողութեան: Շահակալ 4 տարիները պէտք է զետեղել 373 էն 377:

Ոչ մահուան պարագայք լաւո՞ի են և ոչ գերեզմանին տեղը: Հաւանական է ենթադրել որ րոլորովին քաշուած կեանք. մը ունէր, և եթէ մահն ալ իւր հայրենական Մանազկերտի մէջ չեղաւ, հարկաւ մարմինը փոխադրուեցաւ իւր հայրենական կալուածը, ինչպէս բոլոր նախորդ հայրապետաց համար պատմուած տեսանք: Դիտողութեան արժանի է որ և ոչ միուն համար կրցանք զրել տակաւին թէ Մալր Աթոռին մէջ մեռու և Մալր Կաթուղիկէին մօտ թաղուեցաւ:

Տ. ԶԱՀԻՆ ՄԱՆԱԶԿԵՐՑԱՅԻ

1. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Շահակալ լաջորդը դիւրաւ որոշուեցաւ ժառանգական ոճին հետեւով և կաթողիկոս եղաւ Զաւէն Մանազկերտացեաց կամ Աղբանսուեանց տոհմէն Յետիններէն ումանք (Նշխ. 28, Յովէ. 68). Զաւէնը Շահակալ եղբար կարծեցին, բայց լիներ միան «լազականութենէ» կամ «ի զաւակէ» Աղբիանոսի կըսին (Խոր. 98, Քուզ. 271), հետեարար հաւանականագոյն է լոկ եղբօրորդի կարծել:

Զաւէնի հայրապետութիւնը Խորենացին կը դնէ «կերպորդ ամի Վարազդատալ» (Խոր. 98), և մենք Վարազդատի թագաւորելը 374ին վերջը կամ 375ին սկիզբը դրած լինելով Շահակի մահը և Զաւէնի լաջորդութիւնը միանդաման տեղի ունեցած կը լինին 377ին և Խորենացով ժամանակադրութեան համեմատական մասը անփոփոխ կը մնալ:

Խորենացին լուր է բոլորովին Զաւէնի արդեանց կամ արժանեաց վրաէ, ալ Ներսէսի վարքը զրողը և Յովհաննէս-

կաթողիկոս «առաքինահրաշ վարուք պատճառացեալ» կըսին (Նշխ. 28, Յովէ. 68), թէպէտ ոչ զովեստի պատճառն է լայտնի, և ոչ գովանի գործերու շարք մը պատմուած է: Ալ գոնէ համբաւոյն և աւանդութեան արձագանքը ունեցած են, ալդ համարձակ վկալութիւնը տալու համար:

Իսկ Բուղանդ բոլորովին աննպաստ կերպով կը նկարագրէ Զաւէնը, իրը «չարարար, խիստ, նախանձոտ» անձ մը, որ «որկորուութեամբ, ազանութեամբ, անառակութեամբ կարպ զամենացն աւուրս կենաց իւրոց» (Քուզ. 271): Բայց ալսչափ տխուր նկարագիրէ ետե և ոչ մի գործ չսպամուիր, մինչ պատմիչը պարտասոր է եղելութիւնները լայտնել, որ ընթերցողը իւր տպաւորութիւնները կաղմէր: Գիտելի է ևս որ ալդ խօսքերը կը դժնուին Բուղանդի վերջին կցկառը նիւթերուն մէջ, որք շատ մը քննադատութեան տեղի տուած են:

Զաւէնի վրա զրուած միակ մեզադրանքն այն է, որ ինչքըն անձամբ և իւր քահանակը իրեն հետևողութեամբ կրօնաւորական զգեստի տեղ՝ զինուորական զգեստ, ալսինքն պատղասակրդի աշխարհականաց զգեստը ակսան հազնել, և խօսքը աւելի ճշգելով, զանց ըրին կրօնաւորաց լատուկ պարզուածոր» զգեստները որք մինչեւ ոտքերը կը հասնէին և սկսան հագնել «փոտորկուր ի վերալ ծնազ», ալսինքն է մինչեւ ծունկը հասնող և առջեն շեղակի բացուած զգեստներ (ինչպէս Ասորեստանեաց հին քանդակներուն վրա կը տեսնուին), այն ալ նարօտներով, ծոպերով և կրօնակներով զարդարուած, և միանդաման սամուրենի, կնքմենի, ազուէսենի և գալիքնի մուշտակներ ալ գործածել, և աս զգեստներով բեմ ալ ենչել:

Արդ լայտնի է որ եկեղեցականութիւնը առաջ ալ երկու ձիւղ ունէր, մին կրօնաւորական կամ վանական անձերէ բաղկացած, և միւսը աշխարհիկ ամուսնացեալ երէցներէ: Կազմուած, Լուսաւորչաւ ազգատոհմէն եղող հայրապետները կանուխ կամ անպան ինքզինքնին կրօնաւորութեան նուիրածէին և իրենց օրինակը ընդհանրացեր էր իրենց ըրջանակին մէջ: Տարբեր էր Մանազկերտացեաց կամ Աղբիանուեանց ուղղութիւնը, որք ամուսնաւոր զասպարզէ էին և աշխարհիկ ձևերը կը տանէին, ալսուէս էր և Խազ, որ իրը ձեասէր և պըճնասէր կը բամբասուէր, ալմինքն է իւր վարդապետին Ներսէսի կրօնաւորական պիտի մը չունէր, թէպէտ և սրբութեան և սքանչելագործութեան համբաւն ալ կը վակելի բմիանդաման:

Արդ Խաղն ալ Մանազկերտացեաց ազգակից էր և անոնց պաշտամանութիւնը վալելեց իւր հալածմանց մէջ, Բաղանդ Ասպուրակէսի համար սրբութեան վկայութիւնը չզլանար, թէ ակտն կըսէ թէ «ադանէր դամզայնալ» (Բուզ. 280). Զաւէնի ըրածը պարզապէս գրութեան մը խնդիր կերպի, արսինքն կրօնաւոր և վանական չեղող եկեղեցականները, կրօնաւորական պճղնաւորին կամ սքեմին պարտաւոր չնկատել, նաւորական պաշտաման կանգնելը ոմանց կողման թերես ալիդ դութեան պաշտաման կանգնելը ոմանց կողման մեղադրանաց առիթ ընծափից Սակայն ինչ որ Խաղի և Ասպուրակէսի վրայ մեղադրիլի չընկատուիր, պէտք չէ որ Զաւէնի վրայ մեղադրուիր, Միւս կողմանէ աշխարհական երեցներուն աշխարհիկ ձեռվ զգեստաւորուելուն օրինակը գեռ ևս կայ գաւառներու մէջ, և Կովկասի քահանաներ աշխարհականի գլխարկներ կը գործածեն, և Թուրքիոյ եկեղեցականներուն սպիրական տարազը առաջին ատեններու պատուաւոր աշխարհականներու տարազն էր, և օրինակներն ալ գեռ ևս կը տեսնուին:

Վարազդատի ժամանակն էր Զաւէնի հալրապետութիւնը, երբ փոքր ի շատէ խաղաղ և լաջող ալ էր երկրին կացութիւնը. բայց դժբաղդաբար տեղական չեղաւ: Բատ կամ Սմբատ Սահառունի, Վարազդատալ սնուցիչը, սպարապետութիւնը ձեռք ձգելու համար զաւաճանութեամբ սպաննել թիւնը ձեռք ձգելու համար զաւաճանութեան գործակից ցուցառուաւ Մուշեղը, իր Պապայ սպանութեան միջոցին Մանուշի զախն Բատ եղաւ սպարապետ, բայց նոյն միջոցին Մանուշի կոն Մուշեղի եղբայրներ Պարսկաստանէ դարձան, և հրաւիրեցին համախոններ գտան, Վարազդատի դէմ ելան, և հրաւիրեցին որ թագէն ու երկրէն հրաժարի և հեռանալ (Բուզ. 242—248):

Վարազդատ անարդեց և ինքն ալ զօրք ժողովից. Կար նոյ դաշտի պատերազմը Մանուէլի լաջող եղաւ. Բատ փերի ընկաւ և սպանուեցաւ, Վարազդատ ալ զերի պիտի ինար Մանուէլի որդուց ձեռք, եթէ հայրերնին չարգելէր, որպէս զի փախչի և երթալ (Բուզ. 249). Վարազդատ Ցունաց կալսերութեան կողմը զնաց իւր թազաւորութեան չորրորդ տարին (Խոր. 98). ամսինքն է 378-ին. Վաղէս հապճեպով Գոթաց դէմ կերթար, ուր և մեռաւ 379-ին Հետեաբար Վաղէս Վարազդատի օգնելու վիճակի մէջ չէր. Թէ զոյս որ նմին լաջորազդատի օգնելու չուզեց և աքսորեց ալ (Խոր. 98), հարկաւ իւր անդեց, օգնել չուզեց և աքսորեց ալ (Խոր. 98), հարկաւ իւր անդեց, խոհեմութեամբ ձախողութիւնը վրան հրաւիրած Անելը զգալով:

Վարազդատի վախչելէն լետով, Մանուէլ Պապայ երկու պզտիկ զաւակները և անոնց մակրը մէջտեղ կըհանէ և անոնց անուամբ կը գործէ: Թագուհուոյն Զարմանդուխտ անունը (Բուզ. 251), հայ կարծեցնել կուտաբ զինքն, բայց Խորենացի «ի կաբսերական քաղաքէն» էր կըսէ (Խոր. 102), գուցէ տղարոց լոյն մեծ մաքրը իրենց մօրը հետ վոխանակելով, Ենթադրելով որ Պապ թագաւորելէ առաջ ամուսնացած լինի, Արշակ և Վաղարշակ իւր որդիք կրնաբին ալս միջոցին 12 և 11 տարեկան պատանեակներ լինել:

Արտաքին որժ պէտնելու համար, պահ մը կախեր դիմելու խորհուրդը ունենալէն ետքը (Բուզ. 251), կորոշեն Պարսից զիմել, և ծերունին Շապուհ Սուրէն մարզպանը կը զրկէ Պարսից շահերը հողալու, և միանգամայն կը լոյէ երկուց տղարոց արքունական «թագ», և Զարմանդուխտի «վառ թագաւորաց», և Մուշեղի «թագաւորական պատմուանո» (Բուզ. 252): Ակսակէս Մանուէլի ջանիւք երկիրը անդորր կացութիւն մը կըսաւանաբ, Ըստ Բուզանդար բանկարծ Մանուէլ Սուրէնը կը հալածէ, Պարսիկներու վրայ երեք մած լաղթութիւններ կը տանի և նորէն երկիրը եօթը տարի հանդարտ կը մնալ, և այս ամենուն գրգռիչն է Մեհրուժան ուրացեալը: Եօթը տարի լիտոյ Մեհրուժան նորէն պատերազմի կուզար և Մանուէլէ կը սպանուի (Բուզ. 252—263): Բայց այս ամենը բնաւ սկատմութեան հետ կապ չունի և նախորդ Արշակի պատմութիւնէն փոխանցուած կերեի, մանաւանդ որ Մեհրուժանը Պապայ ժամանակէն սպանուած դիտեմքը:

Ըստ ալլոց Թէոդոսն է Արշակն ու Վաղարշակը զորդ թագաւորեցնողը (Խոր. 100), այլ ալս կրնաբ Թէոդոսի կողմանէ պարզ հաւանութիւն լինել, քանի որ արենելքի գործերով զբաղելու կամք. ալ չունէր Թէոդոս Նորէն կըլիշուի Արշակաբ և Վաղարշակաբ թագաւորելը (Բուզ. 264), բայց այս ալ երկուց եղարց ամուսնական պահկադրութեան հնատ, իբր չափանաներ թագադրութեան և օծման արարողութիւնը ընդունելն է. Արշակի կինը եղաւ Մանուէլի Վարդանուխտ աղջիկը (Բուզ. 262), թէպէտ ուրիշներ Բարզէն Սիւնիի աղջիկը կըսեն (Խոր. 100), իսկ Վաղարշակ առաւ Մանակ Բագրատունիի աղջիկը: Այս եղելութեան թուականը եղած է 380 տարին:

2. ՄԱՀՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԼԸ

Բաւական կարենոր զիապուածներ կատարուած են ալդ միջոցին, և Զաւէն հայրապետը եղած պիտի լինի մանուկ թագաւորները պսակողն և օծողը, սակայն պատմութիւնը երբէք հայրապետին անունը չիներ: Ընդհանրապէս Մանազկերուացիք մեր պատմիչներուն համակրութիւնը չեն վալելած:

Զաւէնի պաշտօնավարութիւնը տեսած է չորս տարի (Խոր. 98), և այդ տևողութիւնը պէտք է զնել 377-էն 381: Միւս կողմանէ 331 կրնաւ Առշակայ երկրորդ տարին ալ ըսուիլ, լորում դրուած է Զաւէնի կաթողիկոսութեան վերջը (Խոր. 100):

Զաւէնի պաշտօնավարութեան տեսողութիւնը Բուղանդ երեք տարի ըսած է (Բուղ. 272), որ կրնաւ Գ և Տ թուատառերու շփոթութենէ ծաղել. նոյնը կրնամք ըսել որից երեք տարի զնողներուն համար ալ (Յովհ. 68): Իսկ Օրբելեան միան մէկ տարի կուտապ (Օրբ. Բ. 249), ինչպէս կընեն ևս նորերէն Զամշեան և իրեն հետևողներ ժամանակագրական հաշիվը ուղղելու համար: Սակայն մեր հաշուազ ներսէսի մահէն մինչեւ Սահակի ընտրութիւնը՝ 373-էն 387 միջոցը ճշդիւ կը պատասխանէ երեք Մանազկերուացիներուն 13 տարիներուն, և կամայական փոփոխութեանց պէտք չմնար:

Զաւէնի մահուան պարագալք, ինչպէս և իւր թաղման տեղը, պատմութեանց մէջ լիշտակուած չեն, այլ սովորական հետեւողութեամբ թաղուած կը լինի իւր հայրենական դամբարանը ի Մանազկերու:

Բուղանդ Զաւէնէ ետքը կը գնէ Շահակ Կորճեաւ անուն կաթողիկոս մը միայն երկու տարուան համար (Բուղ. 272): Չետագաներէն Միխաւել Ասորի՝ Շահակը Զաւէնի եղբայր ըրաւ և վեց տարի պաշտօնավարութիւն տուաւ (Միխ. լաւել. 34): իսկ Խորենացի և բոլոր հին ու նոր պատմագիրք և ցուցակիրք ալդպիսի անձ մը չեն ճանչնար, մեք ալ Բիւղանդի առանձնակ վկայութեամբ նոր անձ մը ցուցակի չեմք անցներ: Զաւէնի յաջորդութիւնը նախապատրաստեալ էր ժառանգական ոճով Պարթևազնեալց և Մանազկերուացեաց տուներուն մէջ, և Ասպուրակէս պատրաստ էր, և զորս, անձ մը Կորճէից տումէն ներս մուծանելու ոչ հարկ կալը և ոչ պատեհ սովիթ:

Եթէ Բուղանդի զրածին ալ մեկնութիւն մը տալ ուզուի, Պ զէպ է զիտել, որ Կորճեաւը որից չորս զաւառներով Պարսկաց ձեռք անցած Յախելու Տիգրիսեան նահանգը կը կազմէին, և այդ նահանգը կրնար իրեն խատուկ զվարաւոր պետ մը, որ շփոթմամբ կաթողիկոս և Մալր Աթոռու կաթողիկոս կարծուեցաւ: Հիմա ալ Եղիպտոսի փոխարքարութիւնը Հայոց առաջնորդին պատրիարքի տիտղոս կուտայ ոք եղած պէտք է ըսել «Շահակ Կորճեաւ վլուխ եպիսկոպոսաց» կոչուած անձը (Բուղ. 272), որուն վրա ալդ անորոշ բացատրութենէն աւելի տեղեկութիւն չունիմք:

Տ. Ա.ՍՊՈՒԻՐԱԿԻՑ ՄԱՆԱԶԿԵՐԾԱՅԻ

1. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

Զաւէնի անմիջական յաջորդն եղաւ Ասպուրակէս «ի զաւակէ Ազրիանոսին» (Բուղ. 272), կամ ազդական Շահակալ և Զաւէնաւ (Խոր. 100), կամ ըստ ուսանց նոյն իսկ եղբայր նորուն Զաւէնաւ (Վարք. 28, Յովհ. 68), և կրնաւ ալ ընդունուիլ այդ վերջին պարագալն: Կաթողիկոսանալուն թուական պիտի լնդունեմք 381 տարին, որու Մակիսին գումարուեցաւ Կոստանդնուպոլսու Ս. Ֆողուլ լորում Մհծ Հայոց եպիսկոպոսներէն ոչ ոք ներկալ գոնուեցաւ: Ամեն պատմագիրք համաձայն են իրեն բարի և առաքինի և սրբակրոն անձանաչէլ զԱսպուրակէս, նոյն իսքն Բուղանդ գովիստներ կը շռալէ, թէպէտու կընդունի թէ զգեստի մասին ըստ ամենալի Զաւէնի կը հնատէր (Բուղ. 280):

Ասպուրակէսի կաթողիկոսութենէն քիչ ետքը կը մեռնի Մանուէլ խաղաղական մահուամբ, կարենոր նորութիւն մը Մամբիկոսնեան սապարապեսներուն շարքին մէջ, զոր և ինքն ցաւելով կը զիտէ, թէ զվարայթար մասն մահացս ենաս ինձ մեռանել» (Բուղ. 265): Մանուէլի մահուամբ նորէն երկուառակութիւնք մկան և երկու որացի պետութիւններուն թշշնապուէ Պարթևազնեալց: Բայց Թէպէտու Մհծ կալորը և ոք խաղաղութեան դաշինք հաստատեցին 384 տարին (Dreyss Ա. 165), և այդ առթիւ Հայուսանը մէջերնին բաժանեցին

(Խոր. 102), միանդամ ընդ միշտ խնդիրի առիթը վերցնելու համար՝ Յունաց բաժին եղան Բարձր Հալոց և Ծոփաց նահանգներ ինչ ինչ լարակից մասերով միւս նահանգներէն. և Արշակ այն կողմը անցաւ անհաւատի Ճեռքին տակ չմնալու համար (Փարար. 33):

Գրեթէ տասուերենք նահանգներ Պարսից մնացին աշխարհին մեծագոյն և լաւադոյն մասը, բայց նախարարներէն շատեր Արշակի ետնէն սկսան զաղթել: Ասպուրակէն հալրապետ, որու հալրենիքն ալ աթուոն ալ Պարսից բաժնին մէջն էր մնաց իւր տեղը, և կենթաղրեմք թէ զլիաւոր դեր ունեցաւ նոր Արշակունի թագաւոր մը գնելու որոշման մէջ, որ եղել լսուրով, թոռն նախկին Արշակաչ, բայց ոչ եղբար Վարագգատակ, և գոնէ 45 տարեկան մարդ մը ոոյն 384 տարւոյն մէջ, որովհետեւ լուժ ծեր մեռած կըսուի 415-ին:

Հապուհ Գ. Խոսրովը թագաւորեցնելէն ետքը հրաւեր
կարդաց գաղթող նախարարներուն, և ոչ միայն ասոնցմէ
շատեր ետ դարձան, այլ և միւս կողմէն գաղթողներ ալ ե-
ղան Հունիի (այժմ Կամախ) գանձերն ալ ի միասին բերելով:
Աստի երկու հայ և ազգակից թագաւորաց թշնամութիւնը,
որ վերջացաւ Երևել դաշտի ճակատամարտով և Խոսրովի լադ-
թութեամբ, որով աշխարհին բաժանումը մնալուն և հանդարտ
ձեւ մը առաւ:

Ասպուրակեսի համար զրուած է թէ «առաջնորդեաց դրանն Խոսքավու» (Բուզ. 272), և ազդ կը ցուցնէ մեզ թէ իւր նախորդներուն պէս անտարբեր չմնաց ազգային և քաղաքական գործոց ընթացքին վրալ, և թէ արքունեաց մէջ ստանձնեց այն դերը, զոր կը պահէին և կը վարէին Պարթեան տոհմին կաթողիկոսները:

Ասպուրակէսի հալքապետութիւնն ալ կարի համառօտ
եղաւ, միայն հինգ տարի (Խորենացի 100), որով կերմի թէ
սա ալ նախորդ Մանազկերտացեաց նման ծերութեան տաեն
կաթողիկոս նստաւ։ Ասպուրակէսի կաթողիկոսութեան տարի-
ները ումանք եօթնի կը բարձրացնեն, թերեւ Ե և Է թուատա-
ռերու չփոթմամբ ուրիշներ երեքի կիջեցնեն իրենց ժամա-
նակազրութեան հնազանդեցնելու համար, մեք զգուարութիւն
չեմք զգար սկզբնականը պահելու։ Մահուան թուականը կը
լինի 386. պարագալք չեն զրուած, իսկ գերեզմանին տեղ
դարձեալ հայրենական Մանազկերտը պէտք է ենթադրել.

2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆՁԵՐ

Բուզանդի պատմութեան վերջը ինչ ինչ կցկտուր լիշա-
տակներ կըգտնեմք Խոսրովի ժամանակ փալուն սրբակրօն ե-
պիսկոպոսաց և միախակեցաց վրայ, որք ի միասին առեալ
կարող են Ներսիսեան աշակերտութիւն և բարեկարգիչներու
խումբ մը համարուել, իբրև նախընթաց Սահակեան աշակեր-
տութեան և թարգմանիչներու խումբին. Արդարոց լիշատակը
օրէնութեամբ տօնելու համար, անունները կը քաղեմք ալս-
տեղ:

Յիշատակեալ եպիսկոպոսներն են.

Ա. Փաւստոս եպիսկոպոս, ծագմամբ հոռոմ, թելակալ կամ գործակալ Ներսէսի, տասուերկու խորհրդակից եպիսկոպոսներուն թիւէն. տեսուչ աղքատանօցաց մինչև Խոսրովի ժամանակ (Բուդ. 273).

Բ. Զորթ եպիսկոպոս, ալր ներքինի, ընկեր առաջնորդ ի պատիւս և ի պաշտամուն (Բնող. 273):

Գ. Արտիթ եպիսկոպոս Բասենով, Դանիէլի աշակերտութենէ մնացած, քարոզութեամբ չըջող մինչև ցխոր ծերութիւն (Բուգ. 274).

Գ. Կիրակոս եպիսկոպոս Տալոց, լառաջն Շահապ կոչուած, հովուական աշխատութիւններով նշանաւոր (Բուզ. 278):

Ե. Զորթուազ եպիսկոպոս Վանանդալ, Առևնպէս նշանաւոր (Բուդ. 278),

Զ. Տիրիկ եղիսկոպոսի գաւառէն թասենով, նոյն կերպով նշանաւոր (Բուդ. 278).

Ե. Մովսէս եպիսկոպոս ի դաւառէն Բասենով, նոյն կեր. պով նշանաւոր (Բուզ. 279):

Ը. Ահարոն եպիսկոպոս, այս ալ արդիւնաւոր (Բուզ. 279):
Եպի միատառենաւ միահնակեաւուն է:

Առաջին պատճենը կազմված է առաջին համարությունից և առաջին առաջարկությունից հետո առաջին առաջարկությունը կազմված է առաջին պատճենի համարությունից և առաջին պատճենի առաջարկությունից:

224—226):

Բ. Եպիփան լուն, նոյն աշակերտութենէ և նոյն տեսիլ-քը տեսնող, ճգնող ծոփաց Մամբրէ լիւր, և լունաց կրդիհնե-

Պուռ մէջ վախճանած (Բուլզ. 226—228):
Գ. Առողջապահ, Կղթական Փաւատոս և Կայսերականի, ծառամամբ

Հոռոմ, ճգնող լՈւրաբատ զաւասի (Բուզ. 273):

Գ. Գինդ Սլկունի, տեսուչ աբեղավից, վարդապետ անուն
ստացած, ճգնող Ասկեանց լերան վրաէ (Բուզ. 280):

Ե. Մուշէ, ձեռնասուն և յաջորդ Գինդի (Բուզ. 281):

Զ. Տրդատ Կամ Տրդած, ճգնող ի Տարոն, Ներսէսի մա-
հուան ներկայ (Բուզ. 281):

Է. Վաչակ:

Ը. Արտօլտ:

Թ. Մարախ, երեքն ալ Գինդի նշանաւոր աշակերտներ:
Աս սրբակրօն անձանց կը խառնէ Բուզանդ ստորին
անձնաւորութիւն մը, Յովհաննէս եպիսկոպոս, Փառէն կաթո-
ղիկոսի որդին, որ մինչև ծերութեան տարիքը ընչից սիրոյն
արքունեաց մէջ ծաղրածուի պաշտօն կը վարէր: Կը պատմոի
թէ չորս ոտքի վրաէ և կառաչելով պալատին մէջ կը պտտէր
և թագաւորին մեղքը վերցնող ուզտ կը ձեռնար, որպէս զի
իւր վրան ազարակաց մուրհակներ դնեն: Սա ինքն անկնունք
աւազակ մը լերան վրալ քահանաւ կը ձեռնազրէ, որպէս զի
իրբեկ իրաւունք անոր գեղեցիկ ձին գրաւէ (Բուզ. 274—278):
Ասանկներու լիշատակութիւն ալ կրնաւ իրբեկ զգուշաւորու-
թեան օրինակ ծառայիել:



9w



ՀՀ Ազգային գրադարան



NL0174991

9094